խառնակեսցի ընդ կին և կամ դուստր թշնամու, եթէ 'ի ժամ պատերազմի և կամ խաղաղութեան՝ դատաստան ընդունիցի ըստ Օրինաց հայոց։

ԳԼՈՒԽ ՆՂԱ.

Որ ոք քաղաք և բերդօրեայք շրջապատեցեալ մէնջ որում իշխան քաղաքին և կամ բերդապան դաշինս խօսելով յանձնել խոստանայցէ, և 'ի ժամանակի յանձնարարութեան դաւաճան գտցի, և 'ի դաւաճանութենէ յայնմանէ անկանիցի մինչև 24 ադայ զինուորաց մերոց, որում հարկեսցի զօրք մեր արձակմամբ սուսերս 'ի ձեռին մատնել բերդն, զամենայն զինուոր և զօրագլուխ 'ի թշնամեաց մի՛ մնասցէ կենդանի 'ի բերանէ սուսերաց մերոց, և եթէ գուցէ կենդանի ըմբռնեսցի իշխան քաղաքին և կամ բերդապանն յայնմիկ, իսկոյն նախատանօք կախիցէ 'ի փայտէ 'ի գլուխն դռան քաղաքին կամ բերդին, և զամենայն զոր ինչ 'ի քաղաքն և կամ բերդն որ գտցի աւար լինիցի զինուորաց մերոց, և յառաջ քան զբամբռոն ներողութեան հնչիլն՝ զամենայն զոր ինչ խայտառակութիւն 'ի զինուորաց մերոց 'ի վերայ թշնամեաց բնակողաց անտի մի՛ մտցի 'ի դատաստան.

ԳԼՈՒԽ ՆՂԲ.

'Ի մէնջ շրջապատեալ որում քաղաքի և